ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2025 թվականի №-Ա

«ՇԻՐԱՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի դեկտեմբերի 27-ի №471-Ա որոշմամբ «ՇԻՐԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Շիրառ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0759 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0759 լիցենզիա) պայմանների 9-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի հունիսի 28-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, ինչի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2024 թվականի դեկտեմբերի 28-ը,

բ) Ընկերությունը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 28-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2025 թվականի հունվարի 14-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական

բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի №ՄՄ/34.3-Մ2-12/139-2025 գրությամբ,

գ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում իր 2025 թվականի հունվարի 30-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Աշտարակ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 364 գրությունը, որով հայտնել է, որ Ընկերությանը պատկանող շենքի տանիքում սեփական կարիքների համար ֆոտովոլտային կայանի տեղադրումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման, շինարարության թույլտվություն չի պահանջում,

դ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում է վարչական իրավախախտումը,

ե) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում կայանը չվերակառուցվելու, լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու, ինչպես նաև արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

զ) Կարգի 43.1-րդ կետի համաձայն՝ Նախագծի (Նախագծի փոփոխությունների) հետ միասին Հանձնաժողով է ներկայացվում նաև Նախագծի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Կարգի №7 հավելվածի: Եթե օրենսդրությամբ առկա չէ կայանի նախագծային աշխատանքներ իրականացնելու պահանջ, ապա Հանձնաժողով է ներկայացվում իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումներ,

է) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, և միևնույն ժամանակ, 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ը) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,

թ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման №1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք չի պահանջվում տվյալ կարգի №4 հավելվածի №1 ցանկով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ կատարելիս, բացառությամբ՝ շենքերի նկուղային և որմնախարսխային (կիսանկուղային) հարկերում, ստորգետնյա ավտոկայանատեղիներում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների (սենքերի՝ ապաստարանների և (կամ) թաքստոցների) ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքների,

ժ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0759 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 28-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ինչը պատճառաբանել է այն հանգամանքով, որ Աշտարակ համայնքի ղեկավարը 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 364 գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը պատկանող շենքի տանիքում սեփական կարիքների համար ֆոտովոլտային կայանի տեղադրումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման՝ շինարարության թույլտվություն չի պահանջում: Քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն

որոշման №1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ կատարելիս՝ նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք չի պահանջվում, հետևաբար իրավասու մարմնի կողմից՝ Աշտարակ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 364 գրությամբ՝ փաստվել է, որ օրենսդրությամբ առկա չէ Կայանի նախագծային աշխատանքներ իրականացնելու պահանջ: Հետևաբար, հարուցված վարույթը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը, Կարգի 43.1-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով 2025 թվականի հունվարի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
ապրիլի 2025թ.